

եւ երկրպագութիւն յաւիտեանս եւ մշտնջենաւոր յաւիտենիւ վերընծայեսցին, ամէն:

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 57ա-61ա)

(ՅԵՐԵՄԻԱՅԻՎ՝ ՎԱՍՈՒ ՄԱՆՈՒԱՆՈՒ ՈՐԴՈՒՅՈՒՄ ԻՐՈՅ  
ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱԱՅԵՏԻ)

Սրբազան եւ երջանիկ . . . զփարեալ . . . դառնալից ողբովք եւ կսկծազին հառաչմամբ, յորդ արտասուօք եւ կական աղէտիւ զրեմ զբօթ վախճանի անդրանկի իմոյ սիրեցելոյ՝ մանկամեռ եւ ճղակոտոր Տեառն Գրիգորիս վարդապետ կոչեցելոյ, զոր նախասահմանութեամբ իւրով Ամենարարն ընծայեաց մեզ պատուօք, փառօք եւ ճոխութեան բարձրութեամբ, եւ այնքան եւս դարձեալ զգետնեալ գրլորեաց ի ստօր ի հող զբաւելով ուստի որ եստեղծն, եւ գբանականութեան հողին, զոր շնորհօք զանազանիւք զարգարեալ փայլեցոյց, արդ էառ եւ յանմահ եւ յանգառնալին կեանսն վիճակեցոյց: Այլ մեզ չունուչարէ եօքտըր. նի՞չուն եօք, զի եւ շատ իմաստունք խելօք մնացեր են մաթ եւ ի հիացումն պակուցման թաճուպաթ. առիւ հարկի՝ թէ լուութեամբ պատուեսցուք եւ ասացուք. Պուտա պեօյլէ օլսուն: Թանրինըն սըընա էվլիա վէ էնպիա էրմէտի, պիզ խուտ օնլարըն պիր էտնա սէկպանի: Յաստըւորս ո՞վ շինեաց իւր տուն կամ հանգեաւ սրտովն ի վերայ, Ադամ, Սողոմոն, Դաւիթ, Աղեքսանդր, Կոստանդին, Տրդատ եւ նմանքն: Թէպէտ ի սոցանէ ոմանք կամակորք՝ յԱդամայ սերեալ ապստամբութիւնն առ